ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 95/10

Քաղ. Երեւան 27 հունվարի 2010թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. հունվարի 27-ի նիստում (արձանագրություն N76/4) քննարկեց հայտի հեղինակ՝ Արման Հովհաննիսյանի կողմից, 16.11.2009 թվականին ներկայացված դիմում-բողոքը «Հղկանյութային կտրող գործիք» օգտակար մոդելի հայտի փորձաքննության արդյունքների դեմ:

Հիշյալ օգտակար մոդելը մերժվել է «Գյուտերի, օգտակար մոդելների եւ արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 14-րդ եւ 15-րդ հոդվածներով սահմանված արտոնագրաունակության պայմաններին չհամապատասխանելու պատճառով:

Փորձաքննության արդյունքում պարզվել է, որ գոյություն ունեն բակելիտային եւ վուլկանիտային կապակցությունով ճակատային մակերեւույթով աշխատող հղկասկավառակներ, որոնք լիսեռի վրա մանեկի միջոցով ամրացման համար ունեն առանցքային լայնացում, օրինակ՝ГОСТ 242483:

Այսպիսով, փորձաքննության արդյունքում պարզվել է, որ հայտատուի կողմից ներկայացված հղկանյութային կտրող գործիքը չի համապատասխանում օգտակար մոդելի արտոնագրաունակության պայմաններին՝ այն նոր չէ:

Բողոքարկողը իր դիմումում խնդրել է անցկացնել նոր փորձաքննություն, որը հաշվի կառնի հայտի անվանումը, տեխնիկայի բնագավառը եւ մակարդակը, գյուտի խնդիրը, հայտի տեղեկատվական աղբյուրը եւ հավակնության սահմանումը:

Կոլեգիայի անդամ՝ պրն. Ա. Տոնիկյանը, փաստեց, որ մանրամասն ուսումնասիրվել են, ինչպես հայտի հեղինակի բողոքը, այնպես էլ փորձաքննության որոշումը: Արդյունքում հանգել են այն եզրակացության, որ հավակնության սահմանումում նշված օգտակար մոդելի ամենամոտ նմանակի տարբերությունը՝ միջանցիք անցքի ներքին մակերեւույթին կատարված է շրջանաձեւ հանվածքը, որտեղ հնարավորություն ունի տեղակայվելու մանեկը, չի համապատասխանում իրականությանը:

Հիշյալի ապացույց են հանդիսանում գոյություն ունեցող հետեւյալ ստանդարտները՝ ГОСТ 21963-82, ГОСТ 2424-83 եւ ինտերնետային կայքում առկա տեղեկատվությունը

(http//www.rostprom.com/db/abras/abras-disk/Na_bakelitovoj_svjazke/page4.html):

Քննարկելով ներկայացված նյութերը, բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, ինչպես նաեւ հաշվի առնելով կոլեգիայի քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը հանգեց հետեւյալ եզրակացության.

«Հղկանյութային կտրող գործիք» օգտակար մոդելը իրավական պահպանության ենթակա չէ «Գյուտերի, օգտակար մոդելների եւ արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 14-րդ եւ 15-րդ հոդվածներով սահմանված արտոնագրաունակության պայմաններին չհամապատասխանելու պատճառով:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի 67-րդ կետի «4» ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել Արման Հովհաննիսյանի 2009թ. նոյեմբերի 16-ի բողոքը եւ օգտակար մոդելի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի

նախագահ Ա.Ազիզյան